

ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱՀՈՐ ՌԵՊԲԵՐԸ

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Շարունակութիւն և վերջ¹⁾)

X

Ար զարմանալի դէպք էր իմ Շուշի գնալու էջմիածնի տպարանը բարեկարգեցինք ևս ու իմ Միքայէլը, Ղարաբաղի դպրոցական գործի բարեկարգութիւնն ևս մեր օգնութեամբը կատարւեց: Միքայէլը՝ քահանայ լինելով՝ ամբողջ վիճակի ընդհանուր զործական էր, Սեղրակեանի մտերիմը և նրա աջ ձեռքը: Շուտով Յովհաննէս Տէր-Գրիգորեանցն էլ թեմական տեսուչ եղաւ իմ յորդորանքով, վարժապետներից էլ գաղափարի տէր մարդիկը միացան մեզ հետ և այսպէսով կազմեց մի բաւական զօրեղ խումբ: Մեղ հարկաւոր էր մեծ ուժ, որովհետև Բաբաջանեանի խումբը ամեն ինչ տակնուվրաց էր արել, քաղաքը խռովութեան մէջ գցել և հաւատացրել, որ իրանից յետոյ այլ ևս քար քարի վրայ չպիտի կանգնի, դպրոցը պիտի փակւի: Հէնց այս մոքով էլ իրանց գործերից ոչ մի հետք չէին թողել, ամեն ինչ տարել էին հետները, նոյն իսկ հասարակ ցուցակները: Այս վիճակում Շուշայ դպրոցը նմանում էր թալանւած Ալաշկերտին: Պէտք էր ուրեմն վերականգնել

1) Տես «Մուլճ» 1893 թ. № 4, 5, 6, 7-8, 9, 10, 11 և 12:

մի քարուքանդ շէնք, և չարութեամբ ու անիրաւութեամբ բծաւորած մի ամենամաքուր պատիւ։ Մեծ էր Հայր Սեղբակեանի գործ դրած ջանքը. ամեն մի առաջարկութիւնս դպրոցի վերաբերութեամբ իսկոցն իրագործում էր կարծես մի դիւթական գաւազանով։ Ես տեսուչ չէի, այլ տեսչապետ, եթէ խորթ չի թւալ այսպէս ասել, որովհետեւ ինքս էի նշանակում տեսուչներ և արձակում, դպրոցների ղեկը, թէ օրիորդաց և թէ աղայոց իմ ձեռին էր։ Ուսումն որ սկսեցինք, մի քանի հոգի եկան միայն, բայց ամիս չանցած վրա թափեցան այնքան, որ էլ տեղ չունէինք ընդունելու և հարկադրւած՝ երկու նոր դասարան ևս աւելցրինք։ Գործը կարգի ընկաւ և յառաջ գնաց հսկայական քայլերով, որից ամօթահար եղան դպրոցի թշնամիները և մեղայ եկան, իսկ բարեկամները ճակատները լայն բաց արին։

Նատ էր դժւար նուշի քաղաքում մի բարոյական նախագիծ իրագործելը։ Այդ քաղաքում չկար ձգտումն դէպի ազնիւն ու վսեմը։ Խնչ որ չէր համբռւել, չէր կշռւել, չէր չափւել, չէր գնահատւել դրամի յայտնի քանակութեամբ, դրանց համար գոյութիւնն չունէր։ Աշակերտների մէջ երեսում էր ծնողաց նիւթապաշտական յատկութիւնը, ինչպէս և նրանց ֆիզիքական առողջութիւնը։ Ֆիզիքապէս առողջ լինելով, ուժեղ էին և մոքով, թէ տղայք և թէ աղջրկէք։ Բայց շատ դժւար էր դրանցից իդէալիստ շինել։ Ամբողջ քաղաքում աչքի չէր ընկնում ոչ մի ապուշ, ոչ մի խելագար, ոչ մի սովորական կարգերն արհամարհող հարբեցող։ Մի հաս ցնորւած մարդ կար միայն, բայց նա էլ մարդամէջ չէր դուրս գալիս, ճգնում էր տանը և աշակերտներ էլ էր կարդացնում։ Նուշեցիք դրա անունը դրել էին բանաստեղծ։ Այս այսպէս լինելուց յետոյ, ուրեմն զիժ պէտք է լինէր մի շուշեցի, որ բանաստեղծ լինելու հակումն ցոյց տար, չէ որ նրան էլ կը ձգէին «բանաստեղծի» կարգը...

Նուշի քաղաքը վաճառաշահ չլինելով՝ ամենայն տարի խախալում, խարրալում է. սաղերն ու տառւզները դուրս են գնում, քաղաքում մնում են փուչն ու տականքսի մանրունքը։ Ես գործ ունէի փուչերի հետ, և սրա համար էլ նահատակւում էի չարաչար։ Դաւալարութիւնը թէ ներսից և թէ դրսից էր, և այնպէս բարդ էր, որ դրանց բոլորի առաջքն առնելու համար պէտք էր

մի առանձին խորհրդարան։ Այս պատճառով ես այնքան զբաղւած էի, որ ինչպէս կասեն՝ քիթ սրբելու ժամանակ չունէի, և ոչինչ չըգրեցի, բացի մի «Անահիտից», և մի «Թեմական տեսչից», որ «Մեղւի» մէջ տպւեց կիսատ պուտ։

Ղարաբաղում ես իբրև ուսուցիչ՝ նման էի ձագեր պահող թուխըսկան հաւի, որ սովորաբար գուրգուրում է իր ձագերին, ինչ տեղից ասես մի բան գտնում, ուտեցնում, և միւնոյն ժամանակ դիւրագրգիռ և կատաղի լինելով՝ յարձակում է շների և կատուների վրայ և փախցնում բագի՛ սուերից։ Բոլոր կոխւներս յառաջ էին գալիս իմ հաւական սիրուց, որ տածում էի գէպի իմ մնուցած ձագերը։ Ով որ վարժապետի կոչում է ունեցել և սիրո, նա կը զգայ, թէ ինչ եմ ուզում ասել, կիմանայ, թէ որպիսի սէր եմ ունեցել ես գէպի իմ գործը, դէպի իմ հոգեզաւակներս։ Մի բանով միայն ես միսիթարւած եմ, որ երախտամոռ աշակերտ ունեցած չեմ։ Ձեմ տեսած ոչ մի ուսուցիչ, որ այս կողմանէ ինձ չափ բախտաւոր լինի եղած։ Ես հոգւով չափ շնորհակալ եմ իմ աշակերտներից։

Նուշու դպրոցում իմ առաջարկութեամբ յաջորդաբար տեսչութիւն արին Զաւատ-բէդ Խշանեանց, բժիշկ Բախիշ-բէդ Աղասարեանց, մամնագէտ մանկավարժ Սելբակ Մանդինեանց և Համբարձում Առաքելեանց։

Սրանցից առաջին երկուսը ձրի կատարեցին իւանց պաշտօնը, իսկ Մանդինեանցին հրաւիրեցինք վարձով։ Սրան ահա կուզեմ մի քանի տող նւիրել ամենայն անաշառութեամբ և ազնւութեամբ, չը նայած իմ ատելութեանս, որ ներկայումն տածում եմ գէպի այդ անձնաւորութիւնը։

Սկսած 67 թւականի վերջերից ես Մանդինեանցի ամենամտերից բարեկամն եմ եղել։ Իմ բարեկամութեան հոգեբանական աղբիւրը հետևեալ դէպքն էր։ 67 թւականի ամառը Մանդինեանը մի քանի շաբաթ վարեց «Մեղւի» խմբագրութիւնը և այդ ժամանակ գրեց նա մի քննադատութիւն իմ «Սրութիւն» և Մանուելը վէպի մասին, որ նոր էր դուրս եկել։ Կարելի բան է արդեօք, որ մի նոր

զրող չը սիրէ իր այն կրիտիկոսին, որ նրան մի նոր երևոյթ է համարում, տաղանդաւոր անւանում և այնքան յափշտակում, որ բոլոր վիպագրողներից բարձր է դասում; թէկուզ այդ բոլորը մի ուրիշի կարծիքով՝ շափաղանցութիւն լինի և սուտ: Բայց այդ ժամանակ մեր Մանդինեանցը սուտ ասել չէր կարող, ստութեան արևեստը դեռ չէր սովորել. նա մեր տաղանդաւոր ու աշխոյժ դերասաններից մէկն էր, իր ուսումը կարծեմ և ազարեան ձեմարանումը աւարտած: Այս յօդւածը ես կարդացի դեռ Պետերբուրումը և ինձ ու ինձ ասացի. «Այս ի՞նչ լաւ տղայ է եղել Մանդինեանցը, ի՞նչ լաւ է հասկացել ջոկել կենդանի գրողին մեռածից, բնականը՝ կեղծից»: Նոյն տարւայ վերջին ես եկայ Թիֆլիս, հետոն անձամբ ծանօթացայ, ներկայ եղայ իր խաղերին և շատ հաւանեցի: Այսպիսով ահա մենք բարեկամացանք, ես դարձայ նրա միակ տաղանդաւոր վիպասանը, իսկ նա իմ միակ տաղանդաւոր դերասանը և կրիտիկոսը:

Վերջը նա գնաց Պետերբուրգ, որ մի քիչ իրաւաբանութիւն սավորէ և մասնաւոր փաստաբանի իրաւունք ձեռք բերէ: Այդտեղ ընկաւ հայ ուսանողների շրջանը, վարակւեց նրանց ձգտումով, որ էր ծառայել աղզային դաստիարակութեան, ինքն էլ արդէն վարժավետութիւն արած էր ներսիսեան գալրոցում, թէև չէր զգացել, որ այդ պաշտօնի կոչումը չունի. վերջապէս, օգուտ քաղելով Սանապարեանի ձեռնոտութիւնից, գնաց Գերմանիա մանկավարժութիւն սովորելու, այն պայմանով սակացն, որ իր ծառայութիւնն իր բարերարի ապագայ նպատակներին նւիրէ: Այս բոլորի մասին նա գրում էր թէ ինձ և թէ Գևհկեանին. երեքս էլ սերտ բարեկամ էինք իրար հետ:

Վերջը երբ որ վերադարձաւ Գերմանիացից արդէն մանկավարժ դարձած, գերմանական փիլիսոփայի դիրք ու ոճ հագած, արտաքին ձեերը փոխած, այսուամենայնիւ ինձ հետ սերտ բարեկամ մնաց, և որովհետեւ այդ ժամանակ ես էլ արդէն ուսուցչութեան ասպարիզումն էի, նա հետամթւած էր լինում իմ գործունէութեանը, մանաւանդ գրաւորին, և առիթը պատահած ժամանակ՝ գովասանք էր գրում իմ մասին, ասելով, եթէ կայ մեզանում մանուկների սիրոն ու լեզուն լաւ հասկացող՝ այդ Աղայեանցն է միայն: Ես էլ մշտ-

քումս ասում էի. «աս որ այսքանը հասկանում է, պէտք է որ լաւ մանկավարժ լինի»: Սրա համար էլ երբ որ մի բան էի գրում մանկավարժական, տանում էի մօտը կարդում, խորհուրդ հարցնում և միշտ էլ միայն հաւանութիւն էի ստանում:

Այստեղ ի դէպ ասեմ, որ ցետոյ, երբ Բահաթրեանցը եկաւ և այս երկուսի մէջ գժտութիւն ընկաւ, այդ ժամանակ ինձ համար պարզեցին երկուսի էլ թերի կողմերը: Բահաթրեանցը ինձ շատ մօտեցաւ և առաջարկեց որ միացեալ ուժով դասագրքեր կազմենք: Ես համաձայնեցի և սկսեցի նիւթեր պատրաստել, բայց երբ ուղեցանք իմ ու նրա նիւթերը միացնել, այստեղ մենք չը հաշուեցանք իրար հետ և՝ ամբողջ ծրագրի վերաբերմամբ և սկզբնական ուսուցման: Զէ, ասացի, լաւն այն է, որ դու քու էշը քշես, ես իմը, ես չեմ կարող երեխային ասել. «այս խոզի ո՞ն է, այս՝ հաւի հօն: Սրա համար խօսք արւինք իրար նիւթից օգուտ չը քաղել. նա իր տպածի վրայ աւելցրեց. «արտատպութիւնը արգելած է». ես էլ իմի վրայ նոյնը աւելցրի: Ոչ ոք չիմացաւ, թէ այդ ինչ էր նշանակում: Մանդինեանցը քննադատեց երկուսն էլ, իմը գովեց, իսկ Բահաթրեանցինը պախարակեց, բայց Բահաթրեանցն էլ նորան ողողեց:

Մանդինեանցն իր մանկավարժական գործունէութիւնն սկսեց մի շատ սխալ քայլով: Նա իր բարերարի հետ ունեցած պայմանը մերժեց, ուխտազանց եղաւ և մինչև անգամ նրա ապագայ գործունէութեան վրայ մի սե սուեր ձգեց: Սրա համար Սանասարեանցն էլ նրան աչքից ձգեց, երեսը տեսնել չուզեց:

Ինձ համար այս իննդիրը մոռթն էր, և ես հակւած էի աւելի Մանդինեանցին արդարացնել, չենթազրելով՝ որ իմ սիրած մարդու վրայ կարող է որ և է բիծ լինել: Եւ հէնց սրա համար էլ, երբ դուրս եկաւ Ներսիսեան դպրանոցից, գնաց Վան և վերադարձաւ յուսախարւած, մնաց առանց պաշտօնի, ընկաւ պարտքի տակ, թշւառացաւ: Այդ ժամանակ ես խնդրեցի հոգաբարձութեանը, որ Մանդինեանցին հրաւիրեն: Խնդիրս չերժեցին և Մանդինեանցը եկաւ Շուշի և ինձ մօտ մնաց, մինչև ընտանիքի դալը: Նատ էր փոխւել Սեղբակս և ընկճւել: Իբրև բարեկամ, ափոփեցի և միփթարեցի իրան և ամենայն ջանք գործ դրի, որ քաղաքի մէջ անուն և հեղինակութիւն սուանայ, բայց զուր եղաւ իմ ջանքը: Դեռ

նոր եկած, այստեղ կրկնեց իր դասախոսութիւնը, որ արել էր Թիֆլիսումը իր կատարած ճանապարհորդութեան մասին: Ունկընդիրները հիմամթափեցին և ոմանք էլ ասացին ինձ.

—Պարոն Աղայեանց, թէ որ բերած մարդիկ չնորհքն այս է, ուրեմն դու հետ մեզ զարաբաղցու տեղ ես գրել, կարծում ես թէ մենք լաւն ու վատլ չենք իմանալ...

—Դուք սխալում եք, ասացի: Այս մարդը ժողովրդի կեանքին անծանօթ լինելով՝ տեսածովը զարմացել է: Եթէ իմանար, որ այդ կեանքը ձեզ աւելի է ծանօթ, ել չէր դասախոսիլ: Բայց սրան ձեզ դասախոսելու համար հօմ չենք բերել: Սա մանկավարժ է և ոչ թէ հասարակ վարժապետ, դիտէք ինչ է մանկավարժութիւնը, ացդպէս բան մեր ոչ մի դպրոցում կայ. մենք գեռ չունենք մանկավարժներ, այս մի հատն է որ կայ:

—Նատ լաւ, սաղ կը մնանք, եղ էլ կը տեսնենք, բայց դրանից իսկի մեր խելքը բան չի կտրում...

Ուզիղն ասած՝ իմ խելքն էլ բան չէր կտրում, իմ նպատակն էր որ մէկ ես էլ տեսնեմ, թէ ինչ բան է արդեօք Մանդինեանցի ձեռքով աւանդւած հերբարտական մանկավարժութիւնը:

Բարձր դասատունը, ուր բաւական խոշոր տղայք կային, յատկացրինք ացդ նոր վարդապետութեանը: Տղայքը պիտի և՛ սովորէին և՛ սովորեցնէին: Եինել էր և մի նոր այբբենարան, իր ասելով՝ Օթոոյի մեթոդով, որով պիտի գրել կարդալ սովորեցնէին մանուկներին: Ես իմ այբբենարանը հանեցի, որ աչքովս տեսնեմ Օթոոյի տըւած արդիւնքը: Ներկայ էի լինում թէ իր դասախոսութեանը և թէ աշակերտների և տեսնում էի, որ մարտած բան չէ ոչ մէկը և ոչ միւսը: Երբ ինքն էր դասախոսում, գիրքն առջեն էր գնում, մի քառորդ ժամ երեսին նայում լուռ ու մունջ, իսկ ացդ ժամանակ աշակերտները յօրանջում էին և սպասում, թէ ինչ պէտք է ասի, և երբ որ թարգմանում էր կարդացածը կամ յետ պատմում իր խօսքերով, աշակերտները գրում էին բառացի, և յետոյ բերան անում մի անմիտ բառաշարութիւն: Իսկ գործնական դասերը երբ որ վերջանում էին, ցոյց էին տալիս աւանդած դասի լաւ ու վատ կողմերը և արձանագրում: Բայց սրանով մանուկների վէրքը չէր սաղանում: Նրանք ապուշ ապուշ նայում էին, չըգիտէին, թէ ի՞նչ

են ուզում իրանցից, թնջ են ուզում հասկացրած լինել։
Ես իմ տպաւորութիւնը չէի թաքցնում Սեղբակից և առանձին ասում էի իրան, որ ձեռք վերցնէ իր 0թտոյից, որ նրանից բան չի դուրս գալ, բայց նա փոխանակ համոզւելու, ինքն էր աշխատում ինձ համոզել, որ ես չշտափեմ, որ տարւայ վերջին արդիւնքը հրաշալի կը լինի։ Հասանք տարւայ վերջին և արդիւնքը եղաւ ոչ թէ զերօ, ինչպէս ես էի կարծում, այլ մինուս, երեխէքը սովորել էին սուտ կարգալ և սուտ գրել. օրինակ՝ գրում էին որ և է տառի ալէս մի բան և կարդում, որ և է բառ. գրւում էին ամ և կարդում ճնճղուկ...

Մանդինեանցն ինքնն իր աչքով տեսնելով իր տւած բացասական արդիւնքը, որ նոյն իսկ խալֆաները չեն անում, էլի պընդում էր, թէ այդ է միակ ուղիղ ճանապարհը։

—Ոչ, ասացի, այդ ճանապարհը ոչ դու գիտես և ոչ քո 0թտոն։ Միւս տարին ես կսկսեմ, և դու կը տեսնես, թէ այդ միւնոյն երեխէքը ինչպէս են թև առած թռչում։

Այս խօսքի վրայ Մանդինեանցը աչքերը ռաեց վրաստ—թնջ է, ասաց, քո միտքը, ուզում ես իմ հեղինակութիւնը վայր գցել։

—Դու հեղինակութիւն չունիս, ասացի, որ վայր գցեմ, քո հեղինակը 0թտոն է։ Մէկ ինձ էլ տես, գուցէ ինձ աւելի ես հաւանում քան թէ 0թտոյին։

—Ես քեզ հաւանում եմ, բայց ոչ քո հեղինակութիւնը։ Դու ամեն մեթոգով էլ կարող ես արդիւնք ցոյց տալ, նոյն իսկ 0թտոյի մեթոգով էլ, բայց 0թտոն թնջ մեղաւոր է, որ դաս տւողներն անշնորհք լինեն։

—Եթէ այդպէս է, ուրեմն ամեն մեթոգ միւնոյն է, էլ թնջ հարկ կայ 0թտոյի պոչից բռնել։ Բայց դու շատ ես սխալւում։ Տուր ինձ միւնոյն խամ ուսուցիչները, և ես նրանցով ցոյց տամ, թէ թնջ առաւելութիւն ունի իմ՝ սովորեցնելու եղանակը։

—Ես համաձայն չեմ։

—Դու համաձայն չես, ես էլ չեմ համաձայն։ Ես կառաջարկեմ մրցութիւն, եկող տարի նախակըթարաններից մէկը դու վերցրու, միւսը ես։

—0'... այդ խօմ առաւել վաս...»

— Լաւ է թէ վաստ, բայց այլ ես ոչ մի զիջողութիւն չեմ անիլ քեզ:

Այս ժամկց սկսած՝ իմ ամեն բանը Մանդինեանցի աչքումը ծռւեց: Ես կարծում էի, թէ ինչպէս ես եմ վերաբերում զէպի ինքը, նոյն վերաբերութիւնը կունենայ և ինքը գէպի ինձ. բայց տեսայ, որ աս իր փիլխոսփայութիւնը փոխել է, ուզում է, որ ամեն ոք իրան ծառայէ, իսկ ինքը՝ ոչ ոքի: Միւս օրը կարգացի իմ Անահիտը, որ նոր էի գրել, որ տեսնեմ ինչ կարծիք կը յայտնէ իմ նախկին կրիտիկոս, և նա յայտնեց իր կարծիքը.

— Եատ յիմար բան ես գրել, ասաց, խորհուրդ չեմ տալ, որ տպես:

— Դեռ այդպէս յիմար, բան չէիր ասած քո օրումը, պատասխանեցի ես. ինչպէս երկում է, խելքդ կորցրել ես... և սկսեցինք կռւել, խօսքով ի հարիէ:

Մանդինեանցն կողմնակի դրդումներով միտք յղացաւ իշխել ինձ վրայ կամ դուրս մղել: Մտքումը զրաւ, որ ուսուցչական խումբն արձակէ և նոր ընտրութիւն անէ: Այս առաջարկութիւնն արաւ հոգաբարձութեանը: Հոգաբարձութիւնը պատասխանել էր, թէ շատ լաւ, այդ բանը կարող էք անել, միայն մէկ պայմանով. նախ՝ Աղյեանցին չլուսաբարձր է միւսների հետ ազատ համարէք, և երկրորդ՝ ընտրութիւնը պէտք է անէք միասին: Սրա վրայ Մանդինեանցը առ երես համաձայնում է, բայց սիրու դադու մէ, տեսնելով՝ որ իմ դիրքն աւելի ամուր է, քան թէ իրանը:

Երբ վարժապետներին ազատութիւն էր տեղ արդէն և շատերն էլ կարծում էին, թէ իմ խորհրդով է եղել, յանկարծ նամակ ստացաւ Արշակ Նահապետեանից, որ նրան Թիֆլիս էր հրաւիրում: Այս բանը չվթաքցրեց ինձանից, բայց բովանդակութիւնը չասաց: Ես ասացի. Սեդրակ, Արշակը քեզ հրաւիրում է, որ տանէ էջմիածին, ուզում է օգտել քո տիազոսից, բայց լաւ կանես, որ պայմանագանց չլինես ու չերթաս, մանաւանդ որ վարժապետներին էլ արձակել ես, իմ գործը շատ պիտի դժւարանաց:

— Զէ, ասաց, այդպէս բան չկայ, դու միամիտ եղեր, ես կերպամ ու էլի կը գամ շուտով:

Սեդրակս գնաց ու գնաց: Այս այն ժամանակն էր, երբ մեր

մանկավարժները մի արդոնաւորդական արշաւանք սկսեցին դէպի էջմիածին ոսկեգեղմն ձեռք բերելու համար, և ձեռք բերին՝ որը հինգ և որը չորս հազար մանէթ տարեկան։ Եւ ի՞նչ շինեցին այդ առ ասպելական վարձատացութեան փոխարէն—ամենելին ոչինչ, այլ միայն շահախնդրութեան ձգտումն սփռեցին ամենայն տեղ և սե քար ձգեցին առաքելական կոչումն ունեցող իդէալիստ ուսուցիչների վրայ, մի աև քոյ՝ բոլոր դպրոցների վրայ, որոնց տարեկան ծախքի հաշիւը եօթը հազարից չէր անցնում, որով պիտի պահւէին 15—20 ուսուցիչներ։ Մայր դպրոցի և նրա ճիւղերի մէջ եղած նիւթական հաւասարակշռութեան կործանումն եղաւ։ Մանդինեանը լաւ իմանալով, որ ոչ ինձ պէս չի թափանցել նրա հոգու և մաքի մէջ, ոչ ոք ինձ պէս չի ուսումնասիրել նրան, ինձ համարեց իր միակ վտանգաւոր թշնամին, և այնքան կուրացաւ այդ ախտից, որ մի շրջաբերականով արգելեց իմ դասադրքերի գըրծածութիւնը ազգային դպրոցների մէջ, արգելեց իմ մննդարար կերակուրը, որ հարկադրւեն իր տըւածը ուտել։ Սրանից յետոյ էլ ինչ ասել կուզի, որ նրա անունը իսպառ ջնջեցի իմ բարեկամ ների ցուցակից և դասեցի ընդ շարս և ուրացողս...

Հայր Սեդրակեանը Ղարաբաղից գնաց էջմիածին, որ նորանոր արտօնութիւններ ձեռք բերէ իր գործունէութիւնն աւելի ևս ընդարձակելու համար, բայց նրան այլ ևս յետ չըդարձրին, այլ եպիսկոպոս ձեռնադրելով՝ ուղարկեցին Թիֆլիս առաջնորդութեան։ Վերջին երկու տարին ես զուրկ մնալով Սեդրակեանի պէս մի լուրջ, գործունեալ և բարձր պաշտպանից, չափից դուրս շատ նեղութիւններ քաշեցի։ Նրանից յետոյ եկաւ Կարապետ վարդապետ Այւագեանը։ Այս անձի վրայ աւելացաւ և բուն իսկ առաջնորդ Անդրէս եպիսկոպոսը և երիուքը միասին իրանց շնորհքները միացնելով՝ միմեանց արժանաւորութիւնը լրացրին միմեանց պակասութեամբ, որ կատարւի այն ասածը, թէ «Յաթուն Մովսիսի նստան դպիրքն»։ Դպրանոցի եկամուտը, որ Սեդրակեանը հասցը էր մինչև տասնը եօթը հազարի, իրանից յետոյ այդ քանակութիւնը իջաւ հինգ հազարի, որ ասել է 18 ուսուցիչ միասին պէտք է

ստանային այնքան, ինչքան ճեմարանումն ստանում էր մի հոգի, թէև շատ սե:

Եկամուտի աղբեւրները կրկին բաց անելու համար՝ վերջին տարին ես յանձն առայտեսչական պաշտօն, որովհետեւ այլ ես տեսչապետութիւն անել չէի կարող՝ զրկւած լինելով բարձր պաշտպանութիւնից, բայց մարդիկ շուտ զլիսի լնկան, որ իրանց հացը պիտի կտրւի, աշխատեցին բանն այնպէս բերել, որ ես բարկանամ և հրաժարվիմ: Ես էլ բարկացայ և հրաժարական տըւի, թողելով՝ որ մեռելները թաղեն իրանց մեռելներին:

Հեռանալիս միտս ընկաւ այն, ինչ որ լսել էի Վեհապետեան Գէորգ եպիսկոպոսի մասին: Այս մարդը, որ ահագին ջանք էր գործ դրել և Բաղդասար միտրապոլիտից յետոյ կորած կալւածները կրկին ձեռք բերել, վերջը դառն ապերախտութեան հանդիպելով՝ հեռացել էր և հեռանալիս յետ չէր մտիկ տըւել, ասելով՝ «Ափսոն են աչքերս...» Մեր բոլոր քաղաքների մէջ չկայ ոչ մէկը, որ Շուշու չափ ապերախտ լինի, շնորհիւ նրա մրուրի և տականքսի, որ զուրկ լինելով վողից, զուրկ է և սրախց ու խղճից: Շատ անգամ ասում էին ինձ դրսից եկողները. «Դուրսը մենք շատ առատաձեռն ենք և լաւ. վերագառնալիս կառապաններին ամեն մի իջևանում քսան և երեսուն կոպէկ ենք ընծայում», բայց հէնց որ հասնում ենք Ասկեանար, մեր Ղալի ստորոտը, ազտեղ մեր ձեռքը չորանում է, էլ տասը կոպէկից աւելի չենք տալիս: Աւրեմն հէնց որ իրանց քաղաքը երեսում է, չորանում են, իսկ քաղաք մոնելուն պէս՝ քարանում: Այս եկողները զարմանում էին իմ տոկունութեան վրայ և ասում էին. «Դեռ քեզ չափ ոչ ոք չի դիմացել մեր քաղաքում. Շանշեանցի պէս մարդուն, որ այնքան երախտիք ցոյց տըւաւ մեր ուսումնարանին, այնքան արտօնութիւն ձեռք բերեց, մենք նրա ուսուցիչներին ծեծեցինք, իրան էլ գուրս արինք, բայց դու որ այդքան չարչարւում և դիմանում ես, երևի նրանից է, որ մեզանից ես, գիտես մեր բնութիւնը, մեր լեզուն, մեզ հետ վարւելու եղանակը»: Այս, գիտէի, բայց դարձեալ հեռացայ՝ առանց յետ մտիկ տալու Ղովտի նման, որ շուշեցոց պէս չըքարանամ...

XI

Ղարաբաղից վերադարձայ Թիֆլիս այնպէս ջարդւած և յոգնած, որ մտածեցի խսպառ հեռանալ ուսուցչական ասպարիզից և քաշւել զիւղ։ Բայց բանն այնպէս եկաւ, որ ես փոխանակ մի մութ գիւղ ընկնելու, ընկայ մի բանաստեղծական աշխարհ, մի երկնային գրախառ, ուր ինձ փայտիայում էին անմեղ հրեշտակները և զլուխս զարդարում անթառամ ծաղիկներով։ Այդ երանելեաց աշխարհը տիկին Սովիա Բարայեանցի մանկական գրախան էր։

—Դու շատ ես յոզնած, ասաց Աւետիքս, քեզ հարկաւոր է հանգստանալ. և ես կը հանգստացնեմ քեզ։ Սովիայիս հարկաւոր ես դու, որ ազգային-ժողովրդական տարր մտցնես նրա պարտիզի մէջ, ազգային ծաղիկներ բուսանես։ Նրա մօտ դու բոլորովին ապահով կը լինես թէ նիւթապէս և թէ բարոյապէս...

Զարմանալի ասողի տակ եմ ծնւած ես։ Ինձպէս մարդը կամաց ակամաց կենթարկւի միստիցիզմի։ Ասենք այդ ցաւը ես միշտ էլ ունեցել եմ, թէեւ ուշ չեմ գարձրել շատ անգամ և ազատ եմ համարել ինձ ամեն տեսակ նախապաշարմունքից։ Դու լաւութիւն արա Մարկոսին, եթէ նա չիմանայ՝ Մարտիրոսը կիմանայ և կը վարձատրէ քեզ։ Թող մէկ քաղաքում քեզ հալածէն քո արած բարութեան համար, մի ուրիշ քաղաք քեզ կը հասկանայ և կընդունի։ Այս իսկ էր մեր Փրկչի էլ ասելլ իր աշակերտներին թէ չէք հատեցնիլ Խարայէլի քաղաքները—երբ մէկում կը հալածէն, գնացէք միւսը։ Այս կողմանէ, ինչքան էլ գանգատուեմ, ինձպէս բախտաւոր մարդ քիչ եմ տեսել, բախտաւոր՝ ոչ թէ նիւթական հարսաութիւն ձեռք բերելում, այլ բարոյապէս ու մտաւոր։

Ընկայ մանկական պարտէզ, ուր երեխեքը անմեղ հրեշտակների էին նման, ուրախ, զըւարթ, ինչպէս անհոգ թռչնիկներ, որոնք անընդհատ ուստաստում, թռչուառում և երգում էին իրանց մայրեկի։ Սովիայի չորս կողմում, և ես չգիտէի, թէ որից եմ աւելի հիացած, կրթողից, թէ կրթւողներից,—այնքան բնական էր, այնքան սիրալիր դրանց բարոյական և մտաւոր անումն ու զարդացումը։

Եմ պարապմունքն այլտեղ օրական երկու ժամ էր, պէտք է գրագիտութիւն սովորեցնէի։ Առաջին դասից յետոյ՝ նախաճաշիկս պատրաստ էր լինում, երկրորդից յետոյ՝ ազատ էի, բայց շատ ան-

գամ մնում էի երեխանց մօտ, որ ուսումնասիրեմ նրանց պարապ-
մունքները: Այսուղ ահա, ըստ ամենայնի առողջարար շրջանում,
կազդրութեցի ես թէ հոգեպէս և թէ ֆիզիքապէս, և ազատ ժա-
մերս նըսիրեցի մանկական գրականութեան, մանկական բանաստեղ-
ծութեան:

Գրում էի մանկական երգեր և տալիս տիկին Սովիային, որ
այնպէս էր ուրախանում, ինչպէս մի նոր գիւտ արած: Ինձա-
նից ծածուկ էր սովորեցնում երեխաներին և պատվիրում էր,
որ ինձ չասեն մինչև լաւ չըսկատրաստին: Երբ որ լաւ պատրաստ-
ւած էին լինում, հաւաքւում էին գահլիճում գաշնամուրի մօտ,
հրաւիրում էին ինձ, բայց չէին կարողանում համբերել մինչև սկը-
սելը, իրար գլխով էին անցնում, ծափահարում և հասկացնել ու-
զում, որ մի անակընկալ ընծայ պիտի անեն ինձ: Ակսում էր մի
ներկայացումն, դուրս էր գալիս մի հրաշալի պատկեր, և ես չէի
հաւատում, որ այդ պատկերն իմ նկարածն է, այնքան գեղեցկա-
ցրած էր լինում տիկինը և կինդանացրած: Այսօրւանից յետոյ ահա
եօ գլխովին նւիրեցի մանկական գրականութեան, որնք տպագըր-
ւեցին «Աղբիւրում» մի քանի տարի շարունակ: Այդ ժամանակ կազ-
մեցի ես իմ «Ուսումն մայրենի լեզւի» երկրորդ և երրորդ դասա-
գրքերը:

Մանկական պարտիզում մնացի ես մի դպրոցական տարի և
դուրս բերի մի անջնջելի խորին երախտագիտական զգացմունք առ
համեստափայլ տիկին Սովիա Բարայեանց:

Ես դեռ մանկական պարտիզումն էի, որ Սեղրակեան սրբազնը
եկաւ Թիֆլիս իրեկ թեմի առաջնորդ: Հենց նոյն ամառն էլ նա
ինձ հրաւիրեց յանձն առնել թեմական տեսչի պաշտօն, թէկ նոյն
ամառւայ սոճիկը պիտի իմ նախորդն ստանար, իսկ ես ոչինչ: Այս
պաշտօնը ես չէի կարող մերժել հեղամոլութեամբ, որովհետեւ առա-
ջարկողը գիտէր, թէ ում է առաջարկում: Նա ինձ փորձել էր գոր-
ծի և պաշտօնի մէջ. շատ լաւ էր ճանաչում: կարիք չըկար որ մի
ուրիշին առաջարկէր, կամ ես իմդրէի: Սրանով նա ուզեց Ղարաբա-

զում իմ կրած տանջանքի փոխարէնը վարձատրել և նոյն իսկ արդիւնք տեսնել:

Եթե թեմական տեսուչ՝ ես մի իշխանաւոր էի վարժապետների համար, այլ իբրև ուսուցիչ և ընկեր ուսուցչի: Ամեն տեղ՝ ուր որ գնում էի, ուսուցիչ և ուսանող միակերպ ուրախանում էին: Շատ տեղ իրանք վարժապետներն ու վարժուհիներն էին խնդրում, որ մի քանի օր մնամ, փորձնական դասեր տամ թէ աշակերտներին և թէ իրանց, և ես կարգում էի ամենայն ուրախութեամբ: Առանձին ուշադրութիւն էի գարձնում ծաղկոցների վրայ, մանաւանդ վրացախօս տեղերում, և գործս գնում էր շատ յաջող և գեղեցիկ: Բայց յանկարծ մի տիսուր վարագոյր քաշւեց այդ բոլորի վրայ և ես քաշւեցի իմ հայրենի գիւղը, որ այնտեղ ողբամ թէ լնդհանուր և թէ մասնաւոր աղէտներիս վրայ:

Մեռաւ Վիգէնս, մի հատիկ արու զաւակս, ծաղիկ հասակում: Նրան հետեւց մայրը, թողնելով երեք մատղաշ զաւակներս որբ և զուրկ մայրական խնամքից: Այս յանկարծական հարւածներն ինձ ձգեցին մի տարօրինակ հոգեմաշութեան մէջ: Ես դառայ մի ոչինչ և ամենայն ինչ աշքումս ոչնչացաւ: Մի ամբողջ տարի ձեռքս զրիչ չըբռնեց, մի հասարակ նամակ անգամ չըկարողաց զրել: Թուլանալով հողեպէս, թուլացայ և Փիկիքապէս: Տեսնելով, որ էլ ոչ մի բանի պէտք չեմ, մոռածեցի մի վանք քաշւել և այնտեղ մթնացնել իմ վերջին տիսուր օրերը: Այս մասին մի խնդիր տրւի, բայց խնդիրս մերժեցին՝ ինձ համարելով հակառակ կուսակցութեան մարդ: Գրեցի և Սուքիսս սրբազնին, որ ինձ իր մօտ տանէ, որ ես կուելու, որ և է կուսակցութեան պատկանելու սիրտ չունեմ այլ ես, բայց սա պատասխանելու անգամ արժան չը համարեց: Գրեցի ուրիշներին էլ, բայց բոլորն էլ զուր անցաւ: Ասուած չը կամեցաւ:

Շատ անգամ է պատահել, որ ես ուզեցել եմ մի անխորհուրդ և անմիտ բան բռնել մի յիմարութիւն անել, բայց Ասուած ազատել է ինձ այդ փորձանքից: Սիրող սրաի համար սիրազուրկ լինելլ մի որոնելի կորուստ է: Յառաջացած վշտահարութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ սիրոյ որոնումն: Այդ ցաւն առողջանալ կարող է միմիայն դարձեալ սիրով: Եւ որքան անձնատուր էի լինում ախրու-

թեան, այնքան սաստկանում էր վիշտո, քննառութիւն էր գալիս վրաս և սրտի թրթուց: Պատահում էին և խսերիքական այլ երեսիթներ, և ես երկիւղ էի կրում խելացնոր լինելուց: Մտածեցի, որ լաւ բան չէ արածս, զաւակներս կարող են մնալ իսպառ անխնամ: Մէկ լաւ ձի առաջ և սկսեցի պըտուել ամեն կողմ, քէֆի և զւարձութեան եռեւից ընկայ, և երբ զգացի դրա լաւ հետեւանքը, սկսեցի շարունակել այդ կեանքը: Ես առողջացայ, վրաս եկաւ կորցրած Փիզիքական ուժս: Ինձ պակասում էր միացն մի սիրող սիրտ, նրան էլ Աստւած հասցրեց: Ես նորոգւեցի հոգւով և մարմնով, և սրա արդինքն եղաւ իմ «Արեգնազանը», «Տորդը» և սրանց յաջորդող գրածներս: Լուսինը գուրս եկաւ կրկին ամպի տակից, շներն սկսեցին լուսնահաւ տալ.

«Բայց լուսինը բակ բոլորած՝ շարունակում էր իր ճանապան,
Համարելով թէ չի լսում, որ իր վրայ հաշողներ կան»...